



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 ապրիլի 2021 թվականի թիվ 53-Ա

ք. Երևան

«ՑԱՅԳ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմում-բողոքի հիման վրա 2021 թվականի փետրվարի 17-ին հարուցված թիվ 3 վարչական վարույթի նյութերը՝ պարզեց:

2021 թվականի փետրվարի 17-ին Հանձնաժողով մուտքագրված «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմում-բողոքում նշված է «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» և «Գովազդի մասին» օրենքների պահանջների խախտման փաստերի վերաբերյալ:

Ըստ Ընկերության՝ Հեռարձակողի կողմից պարբերաբար խախտվում են «Տեսալսողական մեդիայի մասին» և «Գովազդի մասին» օրենքների պահանջները:

Ընկերության դիմում-բողոքում մասնավորապես նշված է, որ Հեռարձակողի կողմից 2021 թվականի հունվարի 25-ին, ժամը՝ 08:53-ին ծխելու տեսարաններ պարունակող հաղորդում է եթեր հեռարձակվել, սակայն դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ չի ուղեկցվել «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը՝ խախտելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:

Ըստ Ընկերության՝ Հեռարձակողի կողմից պարբերաբար «Այսօր» լրատվական թողարկումից անմիջապես հետո հեռարձակվել է վիճակախաղի գովազդ՝ խախտելով «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը, մասնավորապես.

- 2021 թվականի հունվարի 25-ին, ժամը՝ 22:31-ին,
- 2021 թվականի հունվարի 26-ին, ժամը՝ 22:37-ին,
- 2021 թվականի հունվարի 27-ին, ժամը՝ 22:37-ին,
- 2021 թվականի հունվարի 28-ին, ժամը՝ 22:32-ին,
- 2021 թվականի հունվարի 29-ին, ժամը՝ 22:35-ին,
- 2021 թվականի հունվարի 30-ին, ժամը՝ 22:35-ին,
- 2021 թվականի փետրվարի 01-ին, ժամը՝ 22:39-ին,
- 2021 թվականի փետրվարի 08-ին, ժամը՝ 22:29-ին:

Ընկերությունը հայտնում է նաև, որ Հեռարձակողի կողմից 2021 թվականի հունվարի 27-ին, ժամը՝ 21:16-ին և ժամը՝ 21:17-ին «Պստիկ-Ճստիկ» մանկական տեսալսողական հաղորդումից 3 րոպե հետո նույնպես հեռարձակվել է վիճակախաղի գովազդ՝ խախտելով «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջը:

Ընկերության դիմում-բողոքում նշված է նաև Հեռարձակողի կողմից հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ: Ըստ Ընկերության՝ Հեռարձակողի կողմից ֆիլմերը, մուլտֆիլմերը և այլ հաղորդումները հեռարձակվում են առանց դրանց իրավատերերի համաձայնության և այդ փաստը, թե արդյոք Հեռարձակողն ունի հեռարձակման համար թույլտվություն Ընկերությունը պարզել է որոշ իրավատերերի հարցումներ կատարելու արդյունքում և վերջիններս տվել են բացասական պատասխան:

Ըստ Ընկերության՝ Հեռարձակողի կողմից առանց իրավատիրոջ համաձայնության հեռարձակվել են հետևյալ ֆիլմերը և մուլտֆիլմերը.

-2021 թվականի հունվարի 25-ին, ժամը՝ 02:12-05:13-ը և ժամը՝ 05:15-07:44-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է «Լենֆիլմ» ընկերությանը պատկանող «Зимняя вишня» ֆիլմը /1990թ. /,

-2021 թվականի հունվարի 25-ին, ժամը՝ 11:35-12:37-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել են «Սոյուզմուլտֆիլմ» ընկերությանը պատկանող «Винни Пух» մուլտֆիլմը, իսկ ժամը՝ 12:39-12:59-ը՝ «Топтыжка» մուլտֆիլմը,

-2021 թվականի փետրվարի 01-ին, ժամը՝ 13:16-14:47-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել են «Մոսֆիլմ» ընկերությանը պատկանող «Иван Васильевич меняет профессию» ֆիլմը, իսկ ժամը՝ 18:10-20:47-ը՝ «Мэри Поппинс до свидания» ֆիլմը,

- 2021 թվականի փետրվարի 01-ին, ժամը՝ 04:28-06:07-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է «WARNER BROS. NEW LINE CINEMA» ընկերությանը պատկանող «ANNABELLE» ֆիլմը, որը սարսափ ժանրի է,

-2021 թվականի փետրվարի 07-ին, ժամը՝ 12:58-14:36-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է «Մոսֆիլմ» ընկերությանը պատկանող «Бриллиантовая рука» ֆիլմը,

-2021 թվականի փետրվարի 08-ին, ժամը՝ 13:37-13:47-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է «Սոյուզմուլտֆիլմ» ընկերությանը պատկանող «Павлиний хвост» մուլտֆիլմը,

-2021 թվականի փետրվարի 08-ին, ժամը՝ 22:43-00:00-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է «Լենֆիլմ» ընկերությանը պատկանող «Свадьба в малиновке» ֆիլմը:

Ընկերությունն իր դիմում-բողոքում հայտնում է Հեռարձակողի կողմից իրականացված այլ խախտումների մասին ևս, մասնավորապես նշում է, որ Հեռարձակողի կողմից 2021 թվականի փետրվարի 07-ին, ժամը՝ 08:01-08:44-ն ընկած ժամանակահատվածում որևէ տեսալսողական հաղորդում չի հեռարձակվել և ցուցադրվել է սև ֆոն, ինչպես նաև Ընկերության կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Հեռարձակողի կողմից առավելապես հեռարձակվում են ռուսերեն լեզվով հաղորդումներ և հայերեն հաղորդումների քանակն ընդհանուր եթերաժամանակի 55 տոկոսից պակաս է (օրինակ՝ ռուսերեն լեզվով հաղորդումների քանակը 01.01.2021թ-ին կազմել է 87 տոկոսից ավել, 07.01.2021թ-ին՝ 77 տոկոսից ավել, 25.01.2021թ-ին՝ 70 տոկոսից ավել, 26. 01.2021թ-ին՝ 52 տոկոսից ավել, 27.01.2021թ-ին՝ 49 տոկոսից ավել, 28.01.2021թ-ին՝ 52 տոկոսից ավել,

29.01.2021թ-ին՝ 55 տոկոսից ավել, 30.01.2021թ-ին՝ 49 տոկոսից ավել, 08.02.2021թ-ին՝ 56 տոկոս
և այլն):

Ընկերությունը դիմում-բողոքով խնդրում է Հեռարձակողի նկատմամբ համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառել՝ հետագայում նմանատիպ հակաիրավական արաքները կանխելու նպատակով:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմում-բողոքը՝ 2021 թվականի փետրվարի 17-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի փետրվարի 19-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցերի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և դիմում-բողոքում նշված ժամկետներին համապատասխան եթերի ձայնագրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2021 թվականի մարտի 09-ին Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է այն մասին, որ վերծանելով օրվա ձայնագրությունները պարզել են, որ «Ցայգ» տեսալսողական ծրագրի կողմից 2021 թվականի հունվարի 25-ին հեռարձակվել է «Մոդիլյանի» կենսագրական ֆիլմը, որի մեկնարկին տրվել է «Ծիւելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը 1 վայրկյան տևողությամբ, նախատեսված 5 վայրկյանի փոխարեն և այս փաստը բացատրել են նրանով, որ այն տեղի է ունեցել ավտոմատացված եթերային համակարգի տեխնիկական խոտանի հետևանքով:

Հեռարձակողը պարզաբանում է, որ նույն տեխնիկական խոտանի արդյունք է նաև 2021 թվականի հունվարի 27-ին, ժամը՝ 21:16-ին հեռարձակված սխալ գովազդային բլոկը:

Ինչ վերաբերում է վիճակախաղերի մասին գովազդներին, ապա Հեռարձակողը հայտնում է, որ «Ցայգ» տեսալսողական ծրագրի եթերով վիճակախաղերի մասին գովազդները հեռարձակվում են ժամը՝ 22:30-ից հետո, լրատվական հերթական թողարկումից հետո (գլխագիրը փակվելուց հետո), օրենքով սահմանված կարգով:

Հեռարձակողը ֆիլմերի և մուլտֆիլմերի հեռարձակման վերաբերյալ հայտնում է, որ բոլոր մարզային տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների համար, այնպես էլ «Ցայգ» մարզային տեսալսողական ծրագրի համար ֆիլմերի և մուլտֆիլմերի հեռարձակումը խնդիր է եղել:

Հեռարձակողը հայտնում է նաև, որ «Ցայգ» տեսալսողական ծրագրի եթերով ոչ սեփական տեսալսողական հաղորդումները հեռարձակվում են համաձայն պայմանագրերի և կից ներկայացրել է տեսալսողական հաղորդումների ցուցադրության իրավունքը հավաստող լիցենզիոն պայմանագրեր, սակայն չի ներկայացրել խնդրո առարկա հանդիսացող ֆիլմերի և մուլտֆիլմերի հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերը: Հեռարձակողի կողմից ներկայացվել է եթերի ձայնագրությունները:

Դիմում-բողոքներում նշված ֆիլմերի և մուլտֆիլմերի հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերը տրամադրելու Հանձնաժողովի հարցմանը ի պատասխան Ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել միայն մուլտֆիլմերի հեռարձակման իրավունքը հավաստող լիցենզիոն պայմանագրերը, բայց ոչ բոլորը:

Վարչական վարույթի շրջանակներում ի լրումն 2021 թվականի փետրվարի 17-ի դիմում-բողոքի, Ընկերության կողմից 2021 թվականի մարտի 10-ին, ապրիլի 07-ին և ապրիլի 12-ին Հանձնաժողով ներկայացվել են Հեռարձակողի կողմից իրականացված նմանատիպ և նույնաբովանդակ խախտումների փաստերի վերաբերյալ ևս դիմում-բողոքներ:

Ըստ Ընկերության` Հեռարձակողի կողմից հեռարձակվել են չինարեն լեզվով հաղորդումներ` ռուսերեն ենթագրով, մասնավորապես.

- 2021 թվականի փետրվարի 08-ին, ժամը` 12:22-12:48-ը և ժամը` 18:26-18:53-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է չինարեն լեզվով հաղորդում «Всеобщее стремление» «АИБ» ռուսերեն ենթագրով, որի ընթացքում` համապատասխանաբար ժամը` 12:30-12:34-ը և ժամը` 18:28-18:31-ն ընկած ժամանակահատվածում դրված վազող տողով հայտարարությունը խանգարել է ռուսերեն թարգմանությունն ընթերցել:

2021 թվականի փետրվարի 09-ին հեռարձակվել են հետևյալ հաղորդումները.

- ժամը` 01:09-01:34-ը և 08:51-09:07-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է չինարեն լեզվով հաղորդում «Всеобщее стремление» «АИБ» ռուսերեն ենթագրերով,

- ժամը` 12:31-12:53-ը և ժամը` 18:28-18:54-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է չինարեն լեզվով հաղորդում «Рисуня Китай» «АИБ» ռուսերեն ենթագրով, որտեղ ժամը` 12:40-12:45-ն ընկած ժամանակահատվածում վազող տողով հայտարարությունը դրված է ռուսերեն թարգմանվող տեքստի վրա,

- ժամը` 22:42-ին լրատվական թողարկումից անմիջապես հետո գովազդվել է վիճակախաղ,

ժամը` 00:05-00:28-ն ընկած ժամանակահատվածում առանց իրավասիրոջ համաձայնության հեռարձակվել են «Լենֆիլմ» ընկերությանը պատկանող «Свадьба в малиновке» ֆիլմը,

- ժամը` 07:37-07:59-ը, ժամը` 09:15-09:36-ը և ժամը` 17:34-17:56-ն ընկած ժամանակահատվածում` «Женская доля» հնդկական սերիալը` ռուսերեն այլ տեսալսողական ծրագրից վերցրած:

2021 թվականի մարտի 15-ին հեռարձակվել են հետևյալ հաղորդումները.

- ժամը` 09:47-10:13-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է «Аромат Синьцзяна» տեսալսողական հաղորդումը, որն ուղեկցվել է ռուսերեն ենթագրով,

- ժամը` 12:23-12:47-ը և ժամը` 18:26-18:50-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է «Великие мастера» հաղորդումը, գրեթե ամբողջությամբ չինարեն, որն ուղեկցվել է ռուսերեն ենթագրով:

- ժամը` 22:51-ին լրատվական թողարկումից անմիջապես հետո գովազդվել է վիճակախաղ:

2021 թվականի ապրիլի 04-ին, ժամը` 10:01-10:33-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվել է հնդկական ZEE STUDIOS, AAMIR KHAN PRODUCTIONS «SECRET SUPERSTAR» ֆիլմը, որի ընթացքում հաճախ լինում էին հնդկերեն լեզվով հատվածներ, որոնք ուղեկցվում էին ռուսերեն ենթագրով: Նշված ֆիլմը ժամը` 10:33-ին ընդհատվել է և սկսվել է վերահեռարձակվել «Հանրային հեռուստաընկերության» տեսալսողական ծրագրի եթերը` Հ1-ի լոգոն էկրանին օգտագործելով մինչև ժամը` 13:00-ն:

Համադրելով փաստերը, Ընկերությունը դիմում-բողոքներում ևս մեկ անգամ հայտնում է, որ 2021 թվականի հունվարի 01-ից մինչև ապրիլի 04-ը ներառյալ (այդ թվում նաև առանձին ամիսների կտրվածքով) Հեռարձակողի տեսալսողական ծրագրում օտար լեզվով հաղորդումները գերազանցել են 45 տոկոսը (օրինակ՝ ապրիլի 04-ին ռուսերեն լեզվով հաղորդումները կազմել են 59 և ավել տոկոս):

Հանձնաժողովն Ընկերության կողմից ի լրումն ներկայացված դիմում-բողոքների մասին ևս ծանուցել է Հեռարձակողին, որին ի պատասխան 2021 թվականի ապրիլի 05-ին Հեռարձակողը ևս պարզաբանում է ներկայացրել այն մասին, որ 2021 թվականի փետրվարի 09-ին ժամը՝ 22:00-ին եթեր հեռարձակված «Այսօր» լրատվականի թողարկման տևողությունը եղել է 40 րոպե 52 վայրկյան, լրատվական ծրագրում տեղի ունեցած փոփոխության հետևանքով ավելացել է ժամը՝ 22:00-ի թողարկման ծավալը, ինչն էլ հանգեցրել է նրան, որ եթերի պատասխանատու օպերատորը սեփական նախաձեռնությամբ եթերային ցանկից հանել է լրատվականին հաջորդող հաղորդումն, ինչն էլ իր հետ ծրագրային շեղում է բերել:

Հետևաբար, «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը հեռարձակվել է ոչ օրենքով սահմանված ժամանակահատվածում:

Հեռարձակողն իր բացատրություններում խոստանում է, որ հետայսու առավել ուշադիր կլինեն և նման խախտումներ այլևս չեն գրանցվի:

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս ուսումնասիրվել է Ընկերության կողմից ներկայացված եթերի ձայնագրությունները և ուսումնասիրության արդյունքում 2021 թվականի մարտի 23-ին արձանագրվել է, որ Հեռարձակողի կողմից թույլ է տրվել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջի խախտումներ, մասնավորապես.

-2021 թվականի հունվարի 25-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավարտվել է ժամը՝ 22:30-ին, որից հետո՝ ժամը՝ 22:31:08-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը,

-2021 թվականի հունվարի 26-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավարտվել է ժամը՝ 22:37:55-ին, որից հետո՝ ժամը՝ 22:38:05-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը,

-2021 թվականի հունվարի 27-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավարտվել է ժամը՝ 22:37:20-ին, որից հետո՝ ժամը՝ 22:37:28-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը,

-2021 թվականի հունվարի 28-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավարտվել է ժամը՝ 22:32:12-ին, որից հետո՝ ժամը՝ 22:32:16-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը,

-2021 թվականի հունվարի 29-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավարտվել է ժամը՝ 22:36:14-ին, որից հետո՝ ժամը՝ 22:36:23-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը,

-2021 թվականի հունվարի 30-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավարտվել է ժամը՝ 22:35:58-ին, որից հետո՝ ժամը՝ 22:36:05-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը,

-2021 թվականի փետրվարի 01-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավարտվել է ժամը՝ 22:39:49-ին, որից հետո՝ ժամը՝ 22:39:56-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը,

-2021 թվականի փետրվարի 08-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավարտվել է ժամը՝ 22:29:29-ին, որից հետո՝ ժամը՝ 22:29:37-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը:

Արձանագրվել է նաև, որ Հեռարձակողի կողմից թույլ է տրվել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջի խախտում.

-2021 թվականի հունվարի 27-ին «Պատիկ-Ճստիկ» մանկական տեսալսողական հաղորդումն ավատվել է ժամը՝ 21:13:09-ին, որից հետո՝ ժամը՝ 21:16:11-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը:

Նշված արաքները համապատասխանում են Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի հատկանիշներին:

Հանձնաժողովի 2021 թվականի մարտի 23-ին կազմված արձանագրության համաձայն՝ Հեռարձակողի կողմից թույլ է տրվել Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջի խախտում.

- 2021 թվականի հունվարի 25-ին ժամը՝ 08:00:07-ին եթեր է հեռարձակվել «Մոդիլյանի» ֆիլմը, որի ընթացքում, ժամը՝ 08:53:02-ին առկա է ծխելու տեսարան պարունակող դրվագ՝ ծխելու տեսարան պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման բացակայությամբ:

Նշված արաքը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասի հատկանիշներին:

Ընկերության կողմից 2021 թվականի մարտի 10-ին ի լրումն ներկայացված դիմում-բողոքում նշված փաստերը ուսումնասիրելու նպատակով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է Հեռարձակողի 2021 թվականի փետրվարի 08-ի և փետրվարի 09-ի եթերի մշտադիտարկում և մշտադիտարկման արդյունքում 2021 թվականի մարտի 19-ին արձանագրվել է, որ Հեռարձակողի կողմից 2021 թվականի փետրվարի 09-ին «Այսօր» լրատվական թողարկումն ավատվել է ժամը՝ 22:43:02-ին, որից հետո՝ ժամը՝ 22:43:08-ին հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը՝ խախտելով «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը:

Ինչ վերաբերում է 2021 թվականի ապրիլի 07-ին և ապրիլի 12-ին ի լրումն ներկայացված դիմում-բողոքներում ներկայացված փաստերին, ապա նշենք, որ Հանձնաժողովը նոր խախտումներ չի արձանագրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի

Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա Հանձնաժողովը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Հանձնաժողովն ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է Օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

«Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է.

«10. Յուրաքանչյուր հեռուստահաղորդակցության ալիքով հեռարձակվող յուրաքանչյուր վիճակախաղի գովազդը թույլատրվում է ժամը 22:00-07:00-ն ընկած ժամանակահատվածում, իսկ ռադիոյով՝ ժամը 08:00-20:00-ն ընկած ժամանակահատվածում: Գովազդը չի թույլատրվում մանկապատանեկան հաղորդումներին նախորդող և հաջորդող մեկ ժամվա ընթացքում: Այդ ժամանակահատվածում գովազդի ընդհանուր տևողությունը, այդ թվում՝ գովազդային հաղորդումները և գովազդային տեղեկատվությունները վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին, չի կարող գերազանցել 3 րոպեն, որը մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի, և ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 60 վայրկյանը:»

«Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ արգելվում է վիճակախաղի գովազդումը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո:

«Գովազդի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահանջման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն է:

Հանձնաժողովն ամրագրում է, որ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները գովազդ հեռարձակելիս պարտավոր են պահպանել Օրենքով և «Գովազդի մասին» օրենքով գովազդի առանձնահատկությունները սահմանող դրույթները և ապրանքների առանձին տեսակների գովազդի առանձնահատկությունները սահմանող «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների կողմից լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո արգելվում է վիճակախաղի գովազդումը, իսկ նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ վիճակախաղի գովազդը չի թույլատրվում նաև մանկապատանեկան հաղորդումներին նախորդող և հաջորդող մեկ ժամվա ընթացքում:

Հանձնաժողովն ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Ցայգ» տեսալսողական ծրագրի եթերում 2021 թվականի հունվարի 25-30-ը պարբերաբար «Այսօր» լրատվական թողարկումից անմիջապես հետո և «Պատիկ-Ճստիկ» մանկական տեսալսողական հաղորդումից 3 րոպե հետո հեռարձակվել է «Աջարաբեթ» վիճակախաղի գովազդը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ «Գովազդի մասին» օրենքով տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների համար վիճակախաղի գովազդն արգելող դրույթ է սահմանված՝ մասնավորապես՝ արգելվում է վիճակախաղի գովազդը լրատվական թողարկումների ընթացքում, դրանցից 20 րոպե առաջ և 20 րոպե հետո, ինչպես նաև վիճակախաղի գովազդը չի թույլատրվում մանկապատանեկան հաղորդումներին նախորդող և հաջորդող մեկ ժամվա ընթացքում, սակայն Հեռարձակողի կողմից չեն պահպանվել «Գովազդի մասին» օրենքով ամրագրված վիճակախաղի գովազդի հեռարձակման սահմանափակումները՝ դրանով իսկ խախտելով «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի հատկանիշներին:

Հանձնաժողովն ամրագրում է նաև հետևյալը.

Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդումը՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 3-րդ գլխի դրույթներով տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների տեսալսողական հաղորդումների կազմակերպման համար սահմանվել են ընդհանուր պահանջներ, մասնավորապես՝ Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների համար պարտավորություն է սահմանված՝ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդում հեռարձակելիս՝ դրա մեկնարկին, տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ պետք է ուղեկցվի «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը, սակայն Հեռարձակողի կողմից 2021 թվականի հունվարի 25-ին եթեր է հեռարձակվել «Մոդիյանի» ֆիլմը, որի ընթացքում, առկա է եղել ծխելու տեսարան պարունակող դրվագ և ծխելու տեսարան պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին բացակայել է «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը՝ չպահպանելով Օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:

Այս խախտման վերաբերյալ Հեռարձակողն իր բացատրություններում փաստում է, որ «Ցայգ» տեսալսողական ծրագրի կողմից 2021 թվականի հունվարի 25-ին հեռարձակվել է «Մոդիյանի» կենսագրական ֆիլմը, որի մեկնարկին տրվել է «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառումը 1 վայրկյան տևողությամբ, նախատեսված 5 վայրկյանի փոխարեն և պարզաբանել է, որ այս խախտումը տեղի է ունեցել ավտոմատացված եթերային համակարգի տեխնիկական խոտանի հետևանքով: Սակայն, փաստենք, որ այս հարցի վերաբերյալ Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունները և պարզաբանումները հիմնավոր և բավարար չեն, քանի որ ավտոմատացված եթերային համակարգի տեխնիկական խոտանը

խախտումը բացառող հանգամանք չէ: Նշված հանգամանքը չի բացառում իրավախախտման փաստը, այլ միայն փաստում է Հեռարձակողի մասնագիտական և տեխնիկական վիճակի մասին, որի հետևանքով թույլ է տրվել իրավախախտումը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակիցների ներկայացված փաստերը և պարզաբանումները, որոնք համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման արդյունքների հետ և արդյունքում արձանագրվել է Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասի հատկանիշներին:

Հանձնաժողովը խախտումն արձանագրելիս կարևորում է նաև այն, որ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման հեռարձակումն ըստ էության կապված է հանրային շահի հետ, որը տվյալ կոնկրետ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես ներառում է իր մեջ հանրության առողջության ու շրջակա միջավայրի պահպանումը: Այս դեպքում պետք է փաստել նաև, որ ծխախոտի դեմ պայքարը հանրային առողջության պահպանման համար է կատարվում և Հեռարձակողը պարտավոր էր պահպանել հանրային առողջության պահպանմանն ուղղված Օրենքի վերոնշյալ դրույթի պահանջը:

Հանձնաժողովը հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ ամրագրում է հետևյալը.

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գույքային իրավունքներն ապահովում են հեղինակի նյութական շահերը՝ տալով հեղինակին բացառիկ իրավունք՝ թույլատրելու կամ արգելելու իր ստեղծագործության կամ դրա օրինակների օգտագործումը:

Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը:

Այսպիսով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի համաձայն՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում, իսկ Հեռարձակողի կողմից ցուցադրվել է հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող ֆիլմեր, որոնց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթեր Հեռարձակողը չի ներկայացրել Հանձնաժողով:

Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս Հանձնաժողովն արձանագրում է, որ Հեռարձակողի կողմից իրականացվել է ոչ սեփական տեսալսողական հաղորդումների հեռարձակում՝ առանց դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության՝ դրանով իսկ խախտելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենսդրությունը:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը հանդիսանում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցող, որը հեռարձակում է տեսալսողական հաղորդումներ և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող

օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքով արգելված արարքի կատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները:

Անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված մնացած ենթադրյալ խախտումներին, Հանձնաժողովը փաստում է, որ վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում այդ փաստերի կապակցությամբ խախտում չի արձանագրվել, օրինակ՝ ըստ Ընկերության՝ Հեռարձակողի կողմից օտար լեզվով հաղորդումները գերազանցում են և հայերեն հաղորդումների քանակն ընդհանուր եթերաժամանակի 55 տոկոսից պակաս է, սակայն նշենք, որ Ընկերությունն այդ հաղորդումների ժամաքանակի հաշվարկը իրականացրել է 10-օրյա կտրվածքով, իսկ Հանձնաժողովը տեսալսողական մեդիաձայնություն մատուցողների կողմից հայերեն տեսալսողական հաղորդումների ընդհանուր ժամաքանակը հաշվարկում է ամսական կտրվածքով, ուստի Ընկերության կողմից կատարված հաշվարկը չի բխում Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթից և խախտում առկա չէ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Իսկ Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ:

Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասի համաձայն՝ ծխելու տեսարաններ պարունակող տեսալսողական հաղորդման մեկնարկին տեսանելի չափով, հինգ վայրկյան տևողությամբ «Ծխելը վնասում է ձեր առողջությանը» գրառման ուղեկցման պահանջը չպահպանելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 8-րդ մասով, 14-րդ հոդվածի 7-րդ մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասով, 24-րդ հոդվածի 2-րդ մասով, և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասը, 57-րդ հոդվածի 16-րդ և 24-րդ մասերը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշեց*.

1. «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 24-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում՝ տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության՝ հեղինակային իրավունքի պահանջները խախտելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

16 ապրիլի 2021թ.

ք. Երևան